

ՏԵՔՍԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Պ. ԴՈՒՐՅԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ս. ՆԱՐՈՒՐՅԱՆ

Հնարավոր է արդյոք խոսել Պետրոս Դուրյանի բանաստեղծությունների տեքստերի մասին՝ առանց ձեռքի տակ ունենալու դրանց հեղինակային բնագրերը: Չէ՞ որ, ձեռագրերի բացակայության պատճառով, արդեն մի քանի տասնամյակ է, ինչ հրատարակիչները, սակավ բացառությամբ, հենվում են գրողի երկերի 1893 թ. ժողովածուի վրա («Տաղք և թատերագությունք, նամականի, դամբանական, տապանագիրք», Կ. Պոլիս), ուր, ինչպես հայտնի է, ուսուցիչ Բ. էքսերճյանը կատարել էր բնագրային բազմաթիվ ճշտումներ՝ մեծ մասամբ վերացնելով առաջին հրատարակության («Տաղք և թատերագությունք», Կ. Պոլիս, 1872) կամայական «ուղղումները»:

Ծշմարիտ է, որ Դուրյանի բանաստեղծություններում շատ բան է ճշտվել և դարձվել «դուրյանական»: Բայց ճշմարիտ է նաև, որ մնում և ժողովածուից ժողովածու են փոխանցվում առանձին խաթարված, նույնիսկ անիմաստ տողեր: Կարևոր է նաև տեքստային տարբերությունների հարցը, որը հրատարակիչների և ուսումնասիրողների ուշադրությունից գրեթե դուրս է մնացել:

Սույն հոդվածը Դուրյանի բանաստեղծությունների տեքստային այդպիսի քննության մի փորձ է:

Հայտնի է, որ Դուրյանի առաջին ժողովածուում զետեղված բանաստեղծությունների մի զգալի մասն աղավաղվել է: Այդ աղավաղումների հեղինակը Սիմոն Ֆելեկյանն է (1835—1904), որին հանձնարարված է եղել բանաստեղծությունների տեքստի պատրաստումը:

Երբ նոր էին տպվել 1872 թ. ժողովածուի առաջին մամուլները, բանաստեղծի ավագ եղբայրը՝ Հարություն Դուրյանը (1848—1873) նկատելով, որ «հեղինակին ոգվույն և ճաշակին հակառակ սրբագրությունք և փոփոխությունք ներմուծված են», ապրիլի 2-ին հրատարակիչ հանձնաժողովին է ուղղում մի վրդովված նամակ՝ նման հրատարակությունը իրավացիորեն համարելով անվանարկություն և պահանջելով կամ վերացնել աղավաղումները, կամ վերադարձնել բնագրերը¹: Այդ բողոքն անտեսվում է:

Մամուլում շատ է դրվել Ֆելեկյանի «ավերածությունների» մասին, նրանից հրապարակային բացատրություններ են պահանջել և հարց է հարուցվել «բարոյական պատասխանատվության» ենթարկել²: Իսկ երբ հրատարակվեց Դուրյանի երկրորդ ժողովածուն, պատկերն իրոք տխուր էր: էքսերճյանը տողատակի նշումներում ցույց տվեց այն աղավաղումները, որ կատարել էր Ֆելեկյանը: Այստեղ հարկ չկա նորից անդրադառնալ դրանց:

Բայց էքսերճյանը չէր կարող վերացնել բոլոր աղավաղումները: Բանն այն է, որ նրա կազմած ժողովածուն, գրաքննական արգելքի պատճառով, չէր ընդգրկում Դուրյանի հայտնի շատ բանաստեղծություններ, և այդ հանգամանքը ժամանակին նկատել է ժողովածուի պետերուրգյան գրախոս «Առյուծը»: «Վաղամեռիկ բանաստեղծին շատ մը սիրուն ոտանավորները և թատերգությանց շատերը դուրս ձգվեցան այս գործեն իբր վնասակար»³: Իրոք, 1893 թ. ժողովածուից դուրս մնացին նախորդ հրատարակության մեջ տպված «Իդա առ Հայաստան», «Ի պատրիարքական ընտրության Ամեն. Հայրիկին», «Ի դիմավորության Ամեն. Հայրիկին», «Հայրիկն Հայոց», «Նոր սև օրեր», «Երգ մարտին Վարդանանց» և «Վիշտք Հայուն» բանաստեղծությունները, իսկ «Սիրեցեք զմիմյանս»-ից կրճատվեց երկու տուն (12 տող): Դժվար չէ նկատել, որ սրանք քաղաքական, հայրենասիրական ու սոցիալական բովանդակությամբ գործեր են, որոնց տպագրությունը 90-ական թվականների Թուրքիայում բացառված էր:

1 «Արևելք», 1892, թիվ 2667 (Բ. էքսերճյան, Դուրյան քսան տարի առաջ):

2 «Մասիս», 1892, թիվ 3972, էջ 291 («Մեր հորիզոնին վրա»):

3 «Արաքս», 1893, գիրք Բ, էջ 117 («Թրքահայ գրականությունը 1893-ին»):

Փաստերը ցույց են տալիս, որ Ֆելեկյանի ավերիչ ձեռքը դիպել է նաև Դուրյանի այս բանաստեղծություններին:

Ա. Չոպանյանը, որին նույնպես խորապես զայրացրել էին Ֆելեկյանի «սրբապիղծ սրբազրույթունները», Դուրյանին նվիրված իր ուսումնասիրության մեջ բերում է այդպիսի աղավաղումների երկու օրինակ: Դրանցից մեկը վերաբերում է «Իդժք առ Հայաստան» բանաստեղծությանը: Գրողի երկերի բոլոր այն ժողովածուներում, ուր տպագրված է այս բանաստեղծությունը, վեցերորդ տան առաջին բառատողը տպված է.

Մինչ ցե՛րը գոչեմ, ձայնըս մեկը չը լսեր,
Հայն յուր ժանգոտ շրղթան երբեք չը սարսեր...
Իրնավ ինձ հետ իրավունք ոչ թոթովեց,
«Հայր շես» ծաղրեց, և ձայնը զիս չը լուվեց.

Ընդգծված տողը բացահայտորեն անիմաստ է: Այդ, անշուշտ զգացել է ակադ. Հր. Աճառյանը, որ իր կազմած ժողովածուում այն խմբագրել է հետևյալ կերպ.

«Հայ շես» ծաղրեց և ձայնը զիս չը լուվեց⁴.

Սխալը, ինչ խոսք, փոքրացել է, բայց բնավ չի վերացել:

Չոպանյանը, որ լավ ծանոթ էր Դուրյանի ձեռագրերին, հաստատում է, որ բնագրում ընդգծված տողը ունեցել է հետևյալ տեսքը.

Հայն զիս ծաղրեց և ձայն մը զիս չը լուվեց⁵.

Բայց Չոպանյանն իր ձեռքի տակ ունեցել է աղավաղումների ուրիշ փաստեր ևս, որոնք նա ինչ-ինչ պասսաճաներով հաշվի չի առել: Այդ է վկայում Չոպանյանի արխիվում պահվող մի չարևոր փաստաթուղթ: Ինչպես երևում է, իր աշխատությունը գրելիս քննադատը նամակով դիմել է բանաստեղծի եղբորը՝ Եղիշե Դուրյանին (1860—1930), որն այն ժամանակ (1891-ին) վարդապետ էր Արմաշի վանքում: Ի շարս այլ հարցերի, Չոպանյանը խնդրել է մատնանշել Ֆելեկյանի ուղղումները: Ե. Դուրյանը սիրով ընդառաջել է: 1891-ի օգոստոսի 30-ի նամակով և. Դուրյանը հայտնում է, որ աղավաղված են հիշյալ բանաստեղծության հետևյալ տողերը.

Պ. Դուրյանը գրել է.

Թերևս ժրպտին Մասյաց մթին սարերը
Կամ արտասվին Սիպիրիո սառերը
Բայց սև հոգիք և սև ճանկեր շեն կրնար
Խելղել իմ ձայնս, փըշրել փըշոտ իմ կնար⁶

Այս տողերը Ֆելեկյանը դարձրել է.

Թերևս ժրպտին Հայոց մթին սարերը,
Կամ շունչ ծխեն Սիպիրիո սառերը,
Բայց սև հոգիք ու սև ճանկեր անողո՛տ
Խելղել կուզան ազատ հոգվույս իմ բողո՛տ

Այնուհետև մատնանշելով յոթերորդ տան աղավաղումը (որը և հաշվի առավ իր գրքում Չոպանյանը), Ե. Դուրյանը հաստատում է, թե այդ տան վերջին տողերը՝

Հայ ու շղթա, ձեզ մոռնալ,
Որբեք, այլ շունչ մըլլալ, ու ձեզ ոգի տալ

ավելացրել է Ֆելեկյանը, բայց, ցավոք, չի ասում, թե բնագրում դրանց փոխարեն ինչ է եղել:

Բերելով աղավաղումների այլ փաստեր Վորոնք իր հրատարակության մեջ վերացրել է էքսերճյանը), Ե. Դուրյանը գրում է. «Մյուս բոլոր քերթվածներն բարեբախտաբար անաղարտ

⁴ Պ. Դուրյան, Երկեր, Երևան, 1947, էջ 18:

⁵ Արշակ Չոպանյան, Պետրոս Դուրյան, կենսագրական և քննադատական ուսումնասիրություն, Իֆիլիս, 1894, էջ 166:

⁶ ԳԱԽ: Ա. Չոպանյանի ֆոնդ, № 1736:

մնացած են»⁷, Իրականում եղել են նաև այլ աղավաղումներ, որոնց վրա բանաստեղծի եղ-
յայրը, ըստ երևույթին, հարկ չի համարել ուշադրություն դարձնել: Ա. Չոպանյանի արխիվում
կա Պ. Դուրյանի հարազատներից (հավանաբար Ադրիպպաս Դուրյանից) ստացված մի նյութ.
այդտեղ կարմիր թանաքով բերված է բանաստեղծի տաղերի սկզբնական տեքստը, կապույտով
նշված են իր՝ Դուրյանի հետազայում մտցրած փոփոխությունները (այդ մասին կխոսվի ստորև),
սևով՝ Ֆելեկյանի սրբագրությունները: Դրանց մեջ մենք գտնում ենք լրացուցիչ փաստեր: Այս-
պես՝ «Վիշտք Հայուն» բանաստեղծության 19-րդ տողը Դուրյանի մոտ եղել է՝

Ալ ծոցեղ բոեւ են հուսո քաղցր հրեշտակք.

Իսկ Ֆելեկյանը կատարել է բառերի տեղափոխություն և շնչել վերջին բառի գաղտնավանկ ը-ն՝

Ալ բոեւ են ծոցեղ հուսո քաղցր հրեշտակք

Նույն բանաստեղծության 30—31 տողերը Դուրյանը գրել է՝

Աղի սղի արտասվաց
Կարիլներ ցուրտ ու սառած

Ֆելեկյանը այս տողերի փոխարեն գրել է՝

Դառնարախիծ մոտածմանց
Քրտուններ՝ սառ քար կտրած՝

Սույն բանաստեղծությունը ընթերցողներին մինչև օրս էլ հայտնի է ֆելեկյանական խմբա-
դրությամբ:

Գոյություն են ունեցել Դուրյանի բանաստեղծությունների երկու տեսրակներ՝ նախնական
և վերջնական: Հիշյալ փոփոխությունները վերցված են երկրորդ տեսրակից: Ինչպես երևում է,
էքսերճյանն իր ձեռքի տակ է ունեցել առաջին տեսրը, այդ պատճառով էլ նրան անհայտ են
մնացել առանձին աղավաղումներ: Օրինակ, «Ներա հետ» բանաստեղծության վեցերորդ տան
վերջին տողը բնագրում եղել է՝

Հանուն աստղեց ցիրուցան,

քայց Ֆելեկյանը ընդգծված բառը փոխարինել է «գիշերվան» բառով, որն այդ ձևով էլ անցել
է հաջորդ ժողովածուներին⁸:

«Սրեկոյան բալն կը սողար բարդիլ խավ» («Ա») բանաստեղծությունը նույնպես խմբագրվել
է. բանաստեղծության 8-րդ, 10-րդ, 26-րդ և 66-րդ տողերը եղել են՝

Ջոր գրկեցին շուտ վոսփորյան օին՝ ալիք:
Սառնանամուտ սարերու սրա քայլ առ քայլ,
Անոր համար ի՞նչ ծաղիկ փրքեցնել
Երբ տերևոց վրա սիւսե գորս աշուն

Իսկ Ֆելեկյանը դարձրել է՝

Ջոր գրկեցին շուտ վոսփորյան խոն՝ ալիք
Սառնամուտ բլրոց վրա քայլ առ քայլ,
Անոր համար ի՞նչ է ծաղիկը ծաղկել.
Ջուր տերևոց կրտա մերկ աշուն.

Այս փոփոխություններին անտեղյակ էր էքսերճյանը, ուստի նրա հրատարակած ժողովա-
ծուում (և հետագա հրատարակություններում) ճշտումներ չեն կատարվել: Բայց էքսերճյանը,
հավանաբար ձեռքի տակ ունենալով առաջին տեսրակը, մտցրել է առանձին փոփոխու-
ններ, սակայն տողատակին չի նշել դրանք: Ֆելեկյանի հրատարակած ժողովածուում բանաստեղ-
ծության 2-րդ, 7-րդ և 49-րդ տողերն են՝

Աստեղազարդ անդունդն հյուսիլ լուռ ու սյավ,
Անդրադարձող գիշերվան աստղն անդրանիկ,
Ալ աստղն աղոտ և կարծես թե ավելի

7 Նույն տեղում:

8 Դուրյանի կենդանության օրոք տպագրված այս բանաստեղծության մեջ հիշյալ տողը
նույնպես համապատասխանում է տեսրում եղածին (տես «Սփրատ», 1871, թիվ 45):

էքսերճյանի հրատարակած ժողովածուում համապատասխանաբար կարգում ենք.

Այն լուսագարդ անդունդն հյուսել լուռ ու սյավ,
Անդրադարձող գիշերվան լույսն անդրանիկ
Այ լույսն աղոտ և կարծես թե ավելի⁹

Առանձին աղավաղումներ հնարավոր էր կանխել, եթե հրատարակիչները դիմեին Դուրյանի-կենդանության օրոք տպագրված բանաստեղծություններին: Այդպիսի մի կարևոր ճշտում առաջարկել է գրականագետ Վ. Քերզիրաշյանը իր «Պետրոս Դուրյան» (Երևան, 1959) մենագրության մեջ, որից ելնելով էլ «Տաղեր»-ի վերջին հրատարակության մեջ (Երևան, 1963) մտցվել է անհրաժեշտ փոփոխություն¹⁰:

Կարելի էր ուղղել նաև «նոր սև օրեր» բանաստեղծության երկու տողը: Ժողովածուներում կարգում ենք.

Մինչ բնության՝ ընկան արյան դարերը, (1)
Կամ մեկ փրփուրն հայրենյաց սուրբ կրակին (34)

«Մամուլ» հանդեսում լույս տեսած բանաստեղծության տեքստը թույլ է տալիս ճշտել բացահայտորեն անիմաստ այս տողերը.

Մինչ բնության ընկան արյան դատերը

և՛

Կամ մեկ փրփուրն հայրենյաց սուրբ երսկին¹¹

Մեր կարծիքով անհասկանալի է նույն բանաստեղծության 6-րդ տան նախավերջին տողը-
Որ սառույցի զերբ ուղիներ՝

Ի՛նչ է նշանակում «սառույցի զերբ ուղիներ» արտահայտությունը: Հանդեսում տպված տեքստում գրված է «սառույցի զերբ սրտիներ», որ լիովին հասկանալի է, մանավանդ որ դրանով կապ է ստեղծվում հաջորդ տան հետ.

Ի՛նչ սիրտ է այս, որ հոս գամեր է Աստված:

Վերն ասվեց, որ 1872-ի ժողովածուում տպագրվել է նաև «Երգ մարտին Վարդանանց» բանաստեղծությունը: Այդ «Երգը» նորից երևաց «Հայրենիքի քնար» հանդեսում 1908 թ. տիրահոշակ «Սահմանադրության» օրերին: Ինչպես երևում է, խմբագրությանն անձանոթ է եղել այդ բանաստեղծության տպագրված լինելու փաստը և այդ պատճառով էլ այն ներկայացվել է որպես «անտիպ» գործ: Բայց հենց այս «սխալը» ցույց է տալիս, որ խմբագրությունը իր տրամադրության տակ ունեցել է բանաստեղծության ձեռագիր օրինակը: Համեմատելով «Երգի» 1872 և 1908 թթ. տեքստերը, առաջին տան հինգերորդ տողում գտնում ենք տարբերություն: Ժողովածուում՝

Արդար վրիժուց ժամն հասավ արդ,
Փշրի Պարսիկն անդուլ կացին,

հանդեսում՝

Փշրի պարսիկն անտաշ կացին¹²,

Իր արժեքավոր ուսումնասիրության մեջ Վ. Քերզիրաշյանը գրում է. «Դուրյանի կենդանության ժամանակ «Մեղու» հանդեսում տպագրվել են երիտասարդ բանաստեղծի վեց տաղերը՝ «Հծծյունք», «Իցի՛վ թե», «Սիրեցի քեղ», «Նայվածք մը», «Սիրել», «Դրժել»...: Ջարմանալի է, որ մինչև այժմ բանաստեղծի կյանքի այս կարևոր փաստի վրա հետազոտողները լուրջ ուշա-

⁹ Չգիտես ինչու Դուրյանի «Երկեր»-ում (Երևան, 1947) բանաստեղծության 2-րդ և 7-րդ տողերը տրված են ըստ 1893-ի ժողովածուի, իսկ 49-րդը մնացել է 1872-ի ժողովածուի տեքստով:

¹⁰ Խոսքը վերաբերում է «Նայվածք մը» բանաստեղծության 3-րդ տանը (տե՛ս Վ. Քերզիրաշյանի նշված աշխատության 145—147 և «Տաղեր»-ի 55 էջերը):

¹¹ «Մամուլ», 1871, թիվ 169, էջ 99: Ե. Դուրյանը նույնպես իր նամակում Չոպանյանի ուշադրությունն է հրավիրում այս վրիպակների վրա:

¹² «Հայրենիքի քնար», 1908, թիվ 4, էջ 90:

գրություն չեն գարձրել: Մինչդեռ «Մեղու» հանդեսում տպագրված տաղերը տեքստային որոշ տարբերություններ ունեն հետագայում հրատարակված նույն տաղերից¹³:

Քերզիրաշյանը ոչ միայն առաջինն է հարուցել այս իրոք հետաքրքիր խնդիրը, այլև առաջինը ցույց տվել «նայվածք մը» բանաստեղծության տեքստային տարբերությունները: Այդպիսի տարբերություններ ունեն նաև բանաստեղծի տպագրության հանձնած մյուս տաղերը (Ք դեպ, «Մեղվից» բացի նա տպագրվել է նաև «Մամուլ» և «Ծփրատ» պարբերականներում

Նկատենք, որ նախապես «Հծծյուն» բանաստեղծությունը ունեցել է «Հծծյուն» խորագիրը. «նայվածք մը» տաղը վերնագրվել է «Հալեաց մի», իսկ «նեւա հետ»-ը՝ «Գիշեր մը»:

Գալով բուն տեքստերին, ապա կարելի է նկատել հետևյալ հիմնական տարբերությունները (սկզբում սալիս ենթ համա՛ռու, ժողովածուներում՝ հրատարակված տեքստերը)

Հծծյուն

տող 5՝
Քերթեր հուզող սյուլի մը պես

«Մեղվում»՝
Քերթեր հուզող հովիկի պես՝

տող 20՝
Ծա կը դողամ թեզ մոտելու:

«Մեղվում»՝
Ծա կը վախճամ թեզ մոտելու:

Տող 23՝
Ծվ թող մեկ մ'ես ալ դալկանամ՝
Բու նայվածքիդ մեջ կրակարոց:

«Մեղվում»՝
Ծվ թող մեկ մ'ես ալ քալկանամ¹⁴

Իցի՛վ քե

Տող 1՝
Ոհ, ի՛նչ ես գու, սե՛ր, երկեի հուր կամ ժրպի՛տ...

«Մեղվում»՝
Ոհ, ա՛վ ես դու, սե՛ր, երկեի հուր կամ ժրպի՛տ...

Տող 20՝
Վերթն շնչիկս ի գիրկդ առնեք ելեէջ:

«Մեղվում»՝
Թոռմեի գիրկ ձեռքդ տայի կյանքիս վերջ:

Տող 23՝
Ցուլանար իմ հայելվույն մեջ եմ ժրպիտ.

«Մեղվում»՝
Պատկերանար հայելվույն մեջ եմ ժպիտ¹⁵

Սիրել

Տող 37՝
Սիրտն անապակ՝ ինչպես վտակ.

«Մեղվում»՝
Սիրտն անապակ՝ ինչպես առվակ¹⁶

Դրժել

Տող 5—8՝
Սիրել աստղերն սե աշերուն,
Ծվ այն խոկումն, որ մըթագնե
Պայծառ ճակատն՝ այն ամպն է
Որ կը շարբ գեմժը լուսնույն:

13 Վ. Քերզիրաշյան, Պետրոս Դուրյան, էջ 145:

14 «Մեղու», 1871, մայիսի 27, թիվ 37:

15 «Մեղու», 1871, հունիսի 19, թիվ 43:

16 «Մեղու», 1871, հուլիսի 19, թիվ 50:

- «Մեղվում» (տող 6—7)՝
 Եվ ուր խսկումն, որ միագնե
 Պայծառ ճակատն, ո՛հ, այն աման է
- Տող 14—16՝
 Եվ շոշափել լոկ ձյունափայլ
 Մոծորակին վրրա ծալ ծալ
 Բափող վարսից ալյակթն ծրփին:
- «Մեղվում» (տող 14)՝
 Եվ շոշափել լոկ ոսկեփայլ
- Տող 23—24՝
 Մոռնալ զիս, լոկ բղն խոկալ,
 Կվանե երազ մ'որուն մեկ շող:
- «Մեղվում» (տող 24)՝
 Վառե երազ-մ'որուն մեկ շող:
- Տող 29—30՝
 Ցուցի իրեն ճակատս գունատ,
 Կուրծս զոզած. մառն իմ աչքին,
- «Մեղվում» (տող 30)՝
 Գոզացած կուրծս, մառն իմ աչքին¹⁷,
- Տող 6՝
 Կախարհ մոխրոց նոճերու
- «Մամուլում»՝
 Կախարհ ոսկերց ու նոճերու
- Տող 20՝
 Արտասվաթոր՝ ղեմքին ծածկած հույլ վարսը,
- «Մամուլում»՝
 Արտասվաթոր՝ ղեմքին թափած հույլ վարսը,
- Տող 53—54՝
 Եմ երբուր Հայ մը մորթեն,
 Կարծեն թե հավ մը մորթեն:
- «Մամուլում» (տող 53)՝
 Ինչպես որ հայ մը մորթեն¹⁸,
- Տող 21՝
 Հուր հորիզոնն մաբեցավ,
- «Սփրատում»՝
 Հուր հորիզոնը սեցավ¹⁹,

Մենք շենք բերում «նայվածք մը» բանաստեղծության տեքստային տարբերությունները, բանի որ, ինչպես նշեցինք, դրանց անդրադարձել է Վ. Քերզիրաշյանը: Ինչ վերաբերում է «Սփրեցի բեզ» տաղին, ապա դրա մասին ավելի հանդամանալի խոսք կլինի ներքևում:

Արդյոք 'Իուրյանի կենդանության օրոք լույս տեսած բանաստեղծությունները չպե՞տք է համարել ավարտուն և համապատասխան փոփոխություններ մտցնել նրա ժողովածուներում: Կարծում ենք ոչ, քանի որ, ինչպես կտեսնենք, բանաստեղծը նորից խմբագրել է «Մեղվում» տպագրած տողերը և էքսերճյանն օգտվել է հեղինակի հենց այդ խմբագրած, ուրեմն և վերջնական տեքստերից: Նույնը թերևս չի կարելի ասել «նոր սև օրեր»-ի մասին, որը չի մտել 1893-ի ժողովածուում և էքսերճյանը հնարավորություն չի ունեցել ճշտել դրա տեքստը:

Այժմ «Սփրեցի բեզ» բանաստեղծության մասին:

17 Նույն տեղում:

18 «Մամուլ», 1871, հոկտեմբերի 8, թիվ 169, էջ 99—100:

19 «Սփրատ», 1871, դեկտեմբերի 11, թիվ 45:

Հայտնի է, որ Դուրյանի որոշ տաղեր («Իցի՛վ թե», «Պետք է մեռնի») ունեն իրենց տարբերակները: էքսերճյանը հայտնում է, որ «Սիրեցի բեզ»-ի տարբերակը «Մնաս բարյավ»-ն է²⁰, «Սիրեցի բեզ»-ի «Մեղվում» լույս տեսած տեքստը ժողովածուների համեմատությամբ ունի նետևյալ տարբերությունները.

Տող 5՝
Թավուտքի մը իուր ծաղկոտ

«Մեղվում»՝
Թավուտքի մը տակ ծաղկոտ

Տող 15—16՝
Եվ թափթփելի ի Բո գիրկ
Զուրեին մատունեղ գիրգ:

«Մեղվում»՝
Իվ թափթփելի Բու հեշտ գիրկ՝
Կը գուրեին մատունեղ գիրգ:

Տող 43—44՝
Հոգին մեջեն միշտ մընչես՝
Թե բնավ դիս սիրած չես:

«Մեղվում»՝
Հոգին մեջեն կը հնչես՝
Թե դու բնավ գիս սիրած չես²¹:

Բանաստեղծության հինգերորդ տնից հետո «Մեղվի» տեքստն ունի մի քառյակ, որ չկա ոչ «Սիրեցի բեզ»-ի և ոչ էլ «Մնաս բարյավ»-ի՝ ժողովածուներում գետեղված տեքստերում.

Ո՛հ, խոցեցիր իմ սիրտս ալ
Եվ ժրպիտըդ զլաքա ր
Նըշողումն այն կենսատու
Այրե ցավեր սրտերու:

Դուրյանի «Կենսագրության» մեջ էքսերճյանը բերում է այս քառյակը՝ տողատակի ծանոթության մեջ գրելով. «Այս մեկ տունն Ա տպագրության մեջ չկա, 1871 տարվո Սրագրին մեջ հրատարակված է սակայն, զոր Պետրոս հետո ջնջած է»--:

Այստեղ հարկավոր է մտցնել երկու ճշտում: Նախ հիշատակված տունը տեղ չի գտել նաև էքսերճյանի ժողովածուում: Երկրորդ՝ այդ բանաստեղծությունը տպագրվել է «Մեղվում»: Սա՛յն անկախ սրանցից, կարևորն այս ծանոթագրության մեջ այն վկայությունն է, որ Դուրյանը ջնջել է մեջբերված քառյակը, այսինքն մամուլում հրատակարել տալուց հետո մշակել է իր բանաստեղծությունը: Կնչ խոսք, այդպես կարող էր վարված լինել նաև մյուս տաղերի հետ, և նշված տարբերություններն, անտարակույս, արդյունք են հենց վերջնական մշակման: Ուստի մամուլում տպագրված տաղերը չի կարելի վերջնական համարել:

Բայց սա դեռ բոլորը չէ: Իր մենագրության մեջ Ա. Չոպանյանը արտահայտում է այն ճիշտ միտքը, որ շատ հաճախ Դուրյանի միևնույն բանաստեղծության տարբերակները ըստ էության երկու տարբեր բանաստեղծություններ են: Այդ միտքն ապացուցելու համար քննադատը գետեղում է «Սիրեցի բեզ»-ի նախնական և ավարտուն օրինակները: Այն տեսքով, ինչպես տպագրված են դրանք (Չոպանյանը խոստովանում է, որ ինքն օգտվել է բանաստեղծի ձևագրերից), դժվար է զանազանել, թե ո՞րն է սկզբնականը, որը վերջնականը: Նույն բանաստեղծության Ա. Չոպանյանի արխիվում գտնվող ընդօրինակությունները ցույց են տալիս, որ այն ունեցել է

20 Բանաստեղծի «Ընտիր բերթվածներ»-ում (Վիեննա, 1922) նախապատվությունը տրված է «Մնաս բարյավ»-ին՝ դուրս թողնելով «Սիրեցի բեզ»-ը: Այդպես են վարվել նաև «Տաղեր»-ի երևանյան 1932, 1936, 1954 և 1963-ի հրատարակիչները:

21 «Մեղու», 1871, հուլիսի 1, թիվ 46:

12 Բ ա ր ս ե ղ Ե. է ք ս ե ր ճ յ ա ն, Ընդարձակ կենսագրություն բարեհիշատակ Պետրոս Դուրյանի, Կ. Պոլիս, 1893, էջ 54:

երեք տարբերակ: «Սիրեցի քեզ»-ը Դուրյանը գրել է առաջին անգամ 1869-ին: Այն բաղկացած է ութ տնից, որի 1—4 տները տեքստային որոշ տարբերություններով հանդերձ համապատասխանում են «Մնաս բարյավ»-ի առաջին շորս տներին, իսկ մնացած տները՝ «Սիրեցի քեզ»-ի 9—12 տներին: Երկրորդ տարբերակը «Մեղվում» լույս տեսածն է, իսկ վերջնականը հենց ժողովածուներից հայտնի բանաստեղծությունն է:

«Տրտունջք»-ը նախապես ունեցել է «Առաջին կասկածք» խորագիրը, որ Դուրյանը նրա առանձին տողեր վերամշակել է: Սա գալիս է ապացուցելու, որ այդ բանաստեղծությունը գրվել է ոչ թե հոգեկան խռովքի ու պոռթկման պահին, այլ եղել է դադափարական որոշակի համոզմունքի արդյունք, լիովին գիտակցված մի ընդլվում:

Այստեղ ուզում ենք բերել միայն «Զոնիկք» բանաստեղծության նախնական տարբերակը.

Մինակ էր
Մեկ վարգ մի
Ներա ձոն
Մատուցի:

Թարմ այտերն
Շիկնեցան
Երբ առավ
Իմ վարդն այն:

Հոն տեսի
Թե ո՞րչափ
Անշուք էր
Մաղկանց....

Եվ նվերս
Ալ ո՞րքան
Ներա քով
Աննըշան²³:

Դուրյանը չի հավանել այս տարբերակը, ջնջել է ամբողջովին և ապա գրել երկրորդ, վերջնական տարբերակը:

23 Ա. Զոպանյանի արխիվ, շհամարակալված նյութեր: